

ԵԶԱԿԻ ԵՎ ԽԻՍՏ ԱՐԺԵՔԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐՈՒԱՆԴ ՓԱՄՊՈՒՔԵԱՆ

Հ. Յ. ԳԱՃԱԿՑՈՒԹԵԱՆ ԾԱԾԿԱՆՈՒՆԵՐՈՒ ԲԱՌԱՋՐԱՆ

ԱՆՁՆԱՌԱՋՐԱՆՆԵՐ, ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ
ԹՈՒԱՆՉԱԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐ


Երևան
2023



Հ. Յ. ԳԱՃԱԿՑՈՒԹԵԱՆ
ԾԱԾԿԱՆՈՒՆԵՐՈՒ
ԲԱՌԱՋՐԱՆ

ՎԵՐ
Մատենակար
Թիւ 5

ԵՐՈՒԱՆԴ ՓԱՄՊՈՒՔԵԱՆ



«Լուսակն» իրատարակչությունը օրերս լույս է ընծայել վաստակաշատ պատմաբան Երվանդ Փամբուկյանի «ՀՅԱԿԱՑՈՒԹԵԱՆ ԾԱԾԿԱՆՈՒՆԵՐՈՒ ԲԱՌԱՐԱՆ». անձնանուններ, տեղանուններ, բուհանային ծածկագրեր» ուշագրավ աշխատությունը, որը միաժամանակ «ՎԵՍ ՄԱՏԵՆԱՇԱՐԻ» հիմքերորդ հատորն է: Այն ներառում է ՀՅԴ հեղափոխական գործունեության առաջին քառասնամյակի ընթացքում ծածկագրված՝ անհատ գործիչների անձնանունների, նրանց գործունեության վայրերի՝ Հայաստանի ու հարակից Երկրների տեղանունների, ինչպես նաև գաղտնի նամակագրության մեջ օգտագործվող թվանշանային ծածկագրերի աղյուսակները: Սա մի եզակի աշխատություն է, որն իր արտաքուստ ոչ մեծ ծավալների մեջ իրականում հսկայական տեղեկատվություն է պարունակում 19–րդ դարի վերջերի ու 20–րդ դարի առաջին տասնամյակների հայ ազատամարտի ու Հայաստանի առաջին հանրապետության պատմության վերաբերյալ: Նրա յուրաքանչյուր տողում առկա անհատ գործիչների կամ տեղանունների ծածկագրված անվանումները բացահայտելու եւ ընթերցողի դասին ներկայացվող աղյուսակները կազմելու համար հեղինակից հսկայական ջանքեր ու բազում տասնամյակներ են պահանջվել: Հիմք ընդունելով ՀՅԴ Կենտրոնական արխիվում պահվող վավերագրերը, Երվանդ Փամբուկյանն անցել է այդ մեծ տառապանքի միջով եւ այսօր ընթերցողի սեղանին է դրել մի արժեքավոր աշխատություն, որն անկասկած ունենալու է բազում վերահրատարակություններ, որովհետեւ մեկ անհատի համար ուղղակի անհնար է ընթերցել ՀՅԴ պատմության բոլոր վավերագրերը ու բացահայտել նրանցում առկա բոլոր ծածկագրված անվանումները:

«Վէմ» համահայկական հանդեսի խմբագրակազմի եւ այս վաղուց սպասվող աշխատությունն իրենց հետագա գիտական պրատումների համար անհրաժեշտ սեղանի գիրք համարող բոլոր պատմաբանների անունից ջերմորեն շնորհավորում ենք մեր ավագ գործընկերոջը եւ նրան ցանկանում առողջություն ու ստեղծագործական նոր նվաճումներ: Երվանդ Փամբուկյանի այս եզակի եւ խիստ արժեքավոր գրքի մասին նախնական պատկերացում կազմելու համար ներկայացնում ենք «Մեր ծածկանունները» առաջաբանը ու «Մեր ծածկանուններու կազմութեան մասին» ներածական խոսքը:

«Վէմ» հանդեսի խմբագրություն

ՄԵՐ ԾԱԾԿԱՆՈՒՆԵՐԸ

Ըսթեցողի դատին ներկայացուող «Հ. Յ. Դաշնակցութեան ծածկանուներու բառարան»ը բռնապետական վարչակարգերի դեմ պայքարի ընթացքում՝ 1890 թուականից մինչեւ 1930-ականները, դաշնակցական գործիչների կողմից խորհրդապահական նպատակներով ծածկագրուած անուն-ազգանունների, ինչպէս նաև նրանց գործունեութեան վայրերի անուանումների՝ տեղանունների առաջին համահաւաք ժողովածուն է, որը կազմել է վաստակաշատ պատմաբան Երուանդ Փամպութեանը։ Երկարատեւ գիտական պրատումների շնորհիւ ստեղծուած այս ինքնատիպ աշխատութիւնը սկզբունքօրէն տարբերում է հայ իրականութեան մէջ մինչ օրս իրատակուած ծածկանունների բառարաններից, քանի որ դրա ձեւաւորման մեթոդանութեան հիմքում հետազօտութեան առարկայի՝ «Հ. Յ. Դաշնակցութիւն» յեղափոխական ու սոցիալիստական կուսակցութեան՝ գործունեութեան առանձնայատկութիւնների հաշուառումն է։ Ինչպէս յայտնի է, ծածկանունների բառարանները մեզանում ստեղծուել են տարբեր ոլորտներում, հիմնականում տպագիր մամուլում հանդէս եկած հայ հեղինակների ինքնութիւնը բացայատելու համար, ուստիեւ դրանց շարադրանքն ուղեկցուել է այդ հեղինակների մասին աւելի մանրանասն տեղեկութիւններով, ինչի նպատակն առաջին հերթին տուեալ անձի գրական ու լրագրողական վաստակի համառու ներկայացումն էր։

Ներկայ բառարանի խնդիրը Հ.Յ.Դ. յեղափոխական գործունեութեան ընթացքում որոշակի ծածկանուններով հանդէս եկած դաշնակցական գործիչների ինքնութիւնն ու նրանց ծածկագրած գործունեութեան վայրերը բացայատելու է։ Անշուշտ, հայ մամուլի էջերում հանդէս եկած դաշնակցականներից շատերն ունեցել են իրենց գրական կեղծանունները, որոնք երբեմն համընկել են քաղաքական գործունեութեան ժամանակ ձեռք բերած ծածկանունների հետ։ Սակայն դրանք դաշնակցական գործիչների իրական, այսինքն՝ յեղափոխական ծածկանունների չնչին մասն են միայն կազմում։

Դաշնակցականների՝ միմեանց հետ ծածկանուններով յարաբերուելու գործելակերպը նրանց յեղափոխական գործունեութեան գաղտնիութեան ապահովման միջոցն էր, որը ժամանակին լայնօրէն կիրառուում էր տարբեր բռնապետական երկրներում եւ մանաւանդ Օսմանեան կայսրութեան մէջ ու ցարական Ռուսաստանում գործող կուսակցութիւնների կողմից։ Դա անհրաժեշտ էր ոչ թէ տպագիր իրատարակութիւններում ազատորեն հանդէս գալու, այլ առաջին հերթին տուեալ դարաշրջանի կապի ու հաղորդակցութեան ամենատարածուած միջոցի՝ նամակագրութեան ճանապարհով յարաբերուելու գործնական նպատակի համար։ Կապի այս եղանակից ամէնից շատ օգտուած ականաւոր դաշնակցական գործիչ Ստեփան Զօրեանի՝ Պարսկաստանում ձեռք բերած «Ռուստոն» ծածկանունը, որն իրանի առասպելական հերո-

սի անուան ննանակումն էր, հետագայում այնքան սերտօրէն միաձուլուեց նրա ինքնութեանը, որ մինչ օրս նա հենց այդ անունով է յայտնի մեր հանրութեանը: Տարիներ անց նոյնը տեղի ունեցաւ Հ.3.Դ. մէկ այլ ականաւոր գործչի՝ Արամ Մանուկեանի հետ. եթէ այսօր Սարգիս Յովհաննիսեան անուն-ազգանուամբ փորձենք փնտռել քաղաքամայր Երեւանը զարդարող նրա յու-շարժաները, ապա ոչ մի արդիմքի չենք հասնի: Այնքան մեծ է եղել այս վառ անհատականութիւնների ներդրումը հայ ազատամարտի պատմութեան մէջ եւ հայոց պետականութեան վերականգնման գործում, որ նրանք այդպէս էլ մնացել են Ռուսում եւ Արամ: Այս իրողութիւնը ստիպել է հեղինակին բառարանը կազմելու ընթացքում երբեմն յատուկ նշանով (*) առանձնացնել այն ծածկանունները, որոնք կարծես թէ ձուլուել են նման անհատների անուններին՝ փաստօրէն դուրս մղելով նրանց ծննդեան անունները:

Այս եւ բազմաթիւ այլ պատճառներով տարիներ շարունակ մեզանում սուր կերպով զգացւում էր հայ ազատամարտի հիմնական բեռն իր ուսերին կրած Հ. Յ. Դաշնակցութեան յեղափոխական պայքարի ընթացքում կուտակուած ծածկանունների առանձին բառարանի ստեղծման կարիքը: Աւելին՝ առանձին հետազոտողների կողմից արդէն հաւաքուել էին նման ծածկանունների որոշակի ցանկեր: Բայց չնայած նրանց համեստ պրայտումներին եւ անգամ Երուանդ Փամպութեանի նման առասպելական աշխատասիրութիւն ունեցող պատմաբանի՝ բազում տարիների տքնածան աշխատանքին, խոստովաննենք, որ Աստծոյ պարգեւած տարիների ընթացքում ուղղակի անհնար է ուսումնասիրել Հ. Յ. Դաշնակցութեան նման մեծ կուսակցութեան գործունեութեան առաջին բառասնամեակի բոլոր վաւերագրերը, որոնց զգալի մասի հեղինակները ստորագրել են իրենց կուսակցական ծածկանուններով, մանաւանդ՝ դաշնակցական ժողովների արձանագրութիւններում նշուած դրանց մասնակիցների ծածկագրուած անուն-ազգանունների ցանկերը: Սա մէկ մարդու գործ չէ, բայց կարեւորն ու ամենադժուարը նման գործի սկիզբը դնելն է՝ գաղտնազերծելով Հ.3.Դ. առանցքային դէմքերի եւ առաւել կարեւոր իրադարձութիւնների մասնակիցների ծածկանունները: Երուանդ Փամպութեանին դա լիովին յաջողուել է՝ Երբեմն դաշնակցական գործիչների ծածկանունների կողքին տեղադրելով ժամանակի հայ իրականութեան այն քաղաքական դէմքերի կեղծանունները, որոնք այս կամ այն կերպ առնչութիւն են ունեցել կուսակցութեան հետ: Հ.3.Դ. պատմութեան բազմաթիւ վաւերագրերում կրկնուող ծածկանունների ու ծածկագրուած տեղանունների բառարանի հրապարակումը մեծապէս դիրացնում է հետազոտողների յաջորդ սերնդի գործը: Ուստի ներկայ աշխատութիւնը բացում է հետագայ հետազոտական աշխատանքների այն լայնահուն ակօսը, որը թոյլ կը տայ յաջորդ սերունդներին ամբողջացնել այս չափազանց մեծ աշխատանք պահանջող գործը:

Հ.3.Դաշնակցութեան ծածկանունների բառարանը մեր առջեւ լուսարձակում է ժամանակի հայ քաղաքական ընտրանուն բնորոշ յեղափոխական գործելակերպի առանձնայատկութիւններն ու լեզուամտածողութեան

խորքային շերտերը, որում ազգային յիշողութիւնը զարմանալիօրէն համադրուել է տարածաշրջանային եւ անգամ համաշխարհային հնչողութիւն ունեցող քաղաքական իրադարձութիւնների ընկալման ու անհատ գործիչների բնաւորութեան, խառնուածքի, ֆիզիքական յատկանիշների բազում նրբութիւնների հաշուառման հետ: Դրանցում կարելի է գտնել հայ ազատամարտի պատմութեան մէջ դրսեւորուած հերոսականութեան վառ բնութագրումներ, որեւէ անձի գործերն ու անցած ճանապարհը բացայայտող՝ ծածկանուն դարձած դիպուկ բնորոշումներ եւ անգամ որեւէ անհատի անձնական թերութիւններն ընկերական նույր հումորով մեկնաբանող ածականներ:

Նոյն լեզուամտածողութիւնը թափանցել է նաեւ տեղանունների ծածկագրման գործընթացի մէջ, որը ներառել է Մեծ Հայքի գրեթէ ողջ տարածքը եւ միաժամանակ հարեւան երկրների այն բնակավայրերը, որոնք գործի բերումով յայտնուել էին դաշնակցականների ուշադրութեան կենտրոնում: Այստեղ առաջնագծում է յայտնուել տուեալ երկրամասի կամ բնակավայրի պատմութեան, տեղանքի, բնակլինայական պայմանների եւ այդտեղ բնակուող մարդկանց զբաղմունքի հաշուառումը: Սակայն մեծ թիւ են կազմում նաեւ այն ծածկանունները, որոնք կապուած են տուեալ վայրի դաշնակցական կառոյցի գործունելութեան նպատակների եւ դրանց իրականացման ընթացքում ծագած դժուարութիւնների հետ: Ընդ որում, նման ծածկանունները ժամանակի ընթացքում երբեմն փոխուել են: Օրինակ՝ 1890-ական թուականներին դաշնակցական գործիչների կողմից իբրեւ **Եկեղեցի** ծածկագրուած Սոսկուա քաղաքը աւելի ուշ՝ բոլշևիկների հետ դիմակայութեան ընթացքում դարձել է **Յրէշ**, իսկ հայերի արեամբ ներկուած Կոռուածաղիկ-Կ. Պոլիսը՝ **Վիշապ**՝ թերեւս նման ձեւով բնորոշելով մեր ժողովրդի ճակատագրում դրանց զոյգ տէրերի խաղացած բացասական դերակատարութիւնը: Ժամանակի ընթացքում՝ յեղափոխական պայքարի ծաւալմանը զուգընթաց, աւելացել է նաեւ նահատակուած դաշնակցական գործիչների անուններով ծածկագրուած բնակավայրերի թիւը: Այսպէս՝ Սերոբ Աղբիւրի նուիրական անունով նրա հայրենի Խլաթ-Ախվաթը կոչուել է **Աղբիւրի շրջանակ**, իսկ մէկ այլ դաշնակցական գործչ՝ Սկրտիչ Սահակեանին (Աբրօ), իր ձնահիւսքի մէջ առած Սասունը դարձել է **Աբրոյի գերեզման**: Սրանով Հ.Յ.Դաշնակցութիւնը կրկնում էր հայոց պատմութեան մէջ մինչ այդ առնուազն երկու անգամ իրականացուած Մեծ Հայքի տարածքի սրբագրումը: Որովհետեւ հայոց հնագոյն առասպել-ներում ամրագրուած մեր հեթանոս աստուածների՝ Յայկի, Վահագնի ու Աստղիկի բնակութեան վայրերից միջնադարում Յայստանեայց առաքելական Եկեղեցու գաղափարաբանութեան ազդեցութեամբ Մեծ Հայքը դարձել էր Սբ. Բարդուղիմեոսի, Սբ. Դարիկի, Գրիգոր Լուսաւորչի եւ, քրիստոնէական հաւատի այլ նահատակների ինքնազոհութեամբ նուիրագործուած տարածք:

Հ. Յ. Դաշնակցութեան եւ նրա հերոս նահատակների շնորհիւ Նոր ժամանակներում սկիզբ է առել երրորդ նուիրագործումը՝ հայ ազատամարտի հերոս նահատակների սուրբ արեամբ: Ուստի դեռեւս մինչեւ Մեծ Եղեռնը Տա-

բօնում, Վասպուրականում եւ այլ Երկրամասերում առաջ էին եկել Յրայրի, Գեղրգ Չաւուշի, Վազգենի եւ այլ հերոսների յիշատակն ամրագրող յիշողութեան վայրեր, իսկ ահա միջնադարի Սբ. Թադէի վանքը դարձել էր Մենաւոր՝ սպասելով իր տարածքով Արեւմտեան Յայաստան թափանցող ազատագրական պայքարի մունետիկներին:

Այսպիսով՝ Յ. Յ. Դաշնակցութեան ծածկանունների ներկայ բառարանը՝ որպէս դաշնակցական գործիչների անուն-ազգանունների եւ նրանց գործունեութեան վայրերի անուանունների առաջին համահաւաք ժողովածու, իր գիտա-ճանաչողական գործառոյթի իրականացման հետ միասին՝ սերունդների յիշողութեան մէջ ստեղծում է հայոց հնագոյն դիցաբանութեան մէջ ամրագրուած հեթանոս աստուածների, քրիստոնէական հաւատի համար նահատակուած առաջին առաքեալների, եւ հայ ազատամարտի նուիրական դէմքերի արիւնով սրբագործուած Մեծ Յայքի՝ հայոց յաւերժական հայրենիքը լինելու իրողութեան համաժամանակեայ (սինքրոնիկ) եւ տարժանակեայ (դիաքրոնիկ) ընկալումների միասնութիւնը, ինչը հայկական պահանջատիրութեան արժեքային ու գաղափարական հիմքն է:

ԳԵՂՐԳ Ս. ԽՈՒՂԻՆԵԱՆ

Պատմագիտութեան դոկտոր

«Վեմ» համրէսի խմբագիր

ԾԱԾԿԱՆՈՒՆՆԵՐՈՒ ԲԱՌԱՐԱՆԻ

ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ծածկանուններու ներկայ բառարանի կազմութեան աշխատանքներուն ձեռնարկուած է շուրջ երկու տասնամեակ առաջ: Ան նախատեսուած չէր բնաւ հրատարակուելու համար: Յեղինակին համար ան պիտի ծառայէր իր խմբագրութեամբ լոյս տեսնող «Նիւթեր Յ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար» շարքի հատորները ծանօթագրելու նպատակին: Ժամանակի ընթացքին հետզհետէ զարգանալով, բառարանը պիտի օգտագործուէր նոյնպէս արխիտային այլ աշխատասիրութիւններ ծանօթագրելու:

Եւ սակայն, շարք մը ընկերներ, որոնց կարգին նաեւ պատմաբան բարեկամներ, ծանօթացած ըլլալով համակարգիչի վրայ շարուած գործի առաջին օրինակներուն, ջերմ փափաք կը յայտնէին հատորի տեսքով հրատարակուած տեսնելու ծածկանուններու բառարանը:

Ահա այս պայմաններուն մէջ եւ ընդառաջելով ցոյց տրուած հետաքրքրութեան, կը ձեռնարկուի ներկայ բառարանի հրատարակութեան, կատարելէ ետք անշուշտ հարկ տեսնուած լրացուններն ու վերստուգունները: Ծածկանուններու ետին գտնուող անձնաւորութիւններու ինքնութեան ճշդումին մէջ կարեւոր չափով մը օգտուած ենք ցարդ տպագրուած արխիտային նիւթերէ, ինչպէս, օրինակ, Սիմոն Վրացեանի խմբագրած եւ ծանօթագրած «Դիւան Յ. Յ. Դաշնակցութեան» երկիատորեակը: Օգտուած ենք նոյնպէս պարբերական մանուլի մէջ կամ առանձին հատորով լոյս տեսած յեղափոխական գործիչներու յուշագրական գրականութենէն: Մեր գլխաւոր աղբիւրը, այսուհանդերձ, եղած է Յ. Յ. Դաշնակցութեան կեղրոնական դիւանատան (Պոսթըն-Ռւաթրառուն) փաստաթուղթերու ճոխ հաւաքածոն: Յոս գտնուող արխիտային նիւթերուն մէջ (տեղեկագիր, նամակ եւ այլն) կը հանդիպինք նոյնպէս այնպիսի փաստաթուղթերու, որոնք, գաղտնապահական նկատումով, շարադրուած են թուանշանային ծածկագրով: Այս վերջինի պարագային կարեւոր է գտնել, ինչպէս կ'ըսէին, օգտագործուած ծածկագրի «բանալին», որպէսզի կարելի ըլլայ «բանալ» ծածկագիրը եւ ինանալ թէ խօսքը ինչ անձնաւորութեան կամ տեղավայրի մասին է: Յատորի վերջաւորութեան տուած ենք թուանշանային ծածկագրերու առաւել գործածուած մօտ 30 օրինակներ, որոնց միջոցաւ կարելի է որոշ գաղափար կազմել ծածկագրութեան այդ ձեւին մասին: Ինչ կը վերաբերի ընդհանրապէս ծածկագիրներու գործածութեան, պէտք է յստակացնել որ կը խօսինք Օսմաննեան Թուրքիոյ եւ Ցարական Ռուսիոյ նման բռնատիրական կայսրութիւններու մասին, ուր անօրինական կը համարուէին յեղափոխական կուսակցութիւններն ու անոնց գործունեութիւնը եւ որ, պետական այլեւայլ արգելքներու կողքին, խիստ գրաբննութիւն հաստատուած էր հաղորդակցութեան միջոցներու եւ յատկապէս նամակագրութեան վրայ: Այնպէս որ, ինչ-

այս յեղափոխական միւս կուսակցութիւնները, Յ. Յ. Դաշնակցութիւնը նաեւ կը գործէր ընդյատակեայ, գաղտնիացնան խստագոյն պայմաններու մէջ: Այսպէս է որ ծնունդ առաջ եւ զարգացած է ծածկագրութեան արուեստը իր այլազան դրսեւորումներով: Այս վերջիններէն մէկն է գաղտնագրութիւնը:

Գրեթէ ոչինչ պիտի հասկնանք Դաշնակցութեան երկու բիւրոններու – Ա-նեւելեան Թիֆլիս, Արեւմտեան ժըննեւ – եւ կազմակերպական միւս մարմիններու միջեւ փոխանակուած շարք մը նամակներէն, եթէ կանխաւ չգիտնանք թէ, օրինակի համար, «ուղարկեցէր տասն հատորը» կը նշանակէ «ուղարկեցէր 10,000 ֆրանք, կամ վարժուիին պրոպագանդիստն է, Մակարները ունի հայդուկներու խունքի ինաստ, Աղօթագիրը՝ շրջաբերականի, «այսինչ (անուն) ընկերոր բորախս եղաւ»՝ հաւասար է աքսորուեցաւ-ի, «հիւանդանոց մտաւ»-ը՝ բանտարկուեցաւի, Վատիկանը՝ Եղիսաբեդ է, Պապը՝ սուլթանը, Սժոյզը՝ Ապտիլ Յամիտ Բ., Ստամբուլեան գործածուած է Պոլսոյ հայոց պատրիարքին համար, աւագ կարտինալը՝ Թուրքիոյ մեծ վեզիրն է, եւ այսպէս շարունակաբար: Գաղտնիացնան այդ տարիններուն դաւադրական բնոյթի իւրաքանչիւր ծեռնարկի առիթով, Յ.Յ.Դ. Բիւրոն կը կազմէր ու համապատասխան մարմնին կ'ուղարկէր քանի մը տասնեակ, երբեմն աւելի, բառերէ կազմուած գաղտնի «բառարան» մը, որպէսզի անոր բառամթերքը օգտագործուէր իրենց գրագրութեան մէջ:

ԳԱՂՏՆԻ ԲԱՐԱՐԱՆ

- 1) Պապ – Նժոյգ – Սուլթան
- 2) Կարտինալ – Մինիստր
- 3) Վիճակառը – Առաջնորդ, վայլի
- 4) Պապի աթոռանիստը – Կ. Պոլիս, Լիս
- 5) Վատիկան – Ելդըզ
- 6) Անուանակոչութիւն – Տեռորական գործ
- 7) Նիւթ – իւղ
- 8) Նուռ – ռումբ
- 9) Լիս – Կ. Պոլիս
- 10) Տեմէն – Տեռորական մարմին
- 11) Աղօթագիրը – Շրջաբերական
- 12) ա George Alexandre – Ժորժ Ալեքսանդր
F. Frederic
- 13) Փարիզի ինամի – Թէրագրի խումբ
- 14) Փարիզի փոքրիկ ինամի – Մէշվէրէթի խումբ
- 15) Սոֆիայի ինամի – Մակեդոն. կոմիտէ
- 16) Տիկին Սօֆի – Սօֆիա քաղաքը
- 17) Օրիորդ Ֆիլոմէն – Ֆիլիպէ քաղաքը
- 18) Oncle Pierre – Փիեռ Քիյառ
- 19) Oncle Francis – Փըեսանուէ
- 20) Սուրէն – Արեւմտ. Բիւրո

21) Արտաւագդ – Արեւելեան Բիւրո

22) Պարա – Դաշնակցութիւնը

23) Հատոր – Հազար Քրանկ

2 Հատոր – 2000 Քրանկ

24) Վարդենիք – Պալքան

ԺԱՐՈՒԱԿՈՒԹԻՈՐ ԲԱՐԱՐԱՆ

(շարունակութիւն)

1) Լիս - Պոլիս – (Երբեմն՝ Հռոմ)

2) Մովագուռ – Զմիւռնիս

3) George Gueurel – Ակնունի

4) Չիւատ – Վահագ

5) Santé bonne – Աչող տեղ Հասայ

6) «Դրօչակ» – Ժամացոյց

7) Հազար – Հատոր

8) Մուալ հիւանդանոց – բանտարկուեց

9) Օպերա – Խուզարկութիւն

10) Դրութիւնը վտանգառը և – ինֆլամենցիան

սաստկանում է

11) Ժընեւ – Mademoiselle Horteme

12) Մէծ վեզիր – Աւագ կարտինալ

13) Տեռորական մարմին – Տեմէն

Գաղտնի բառարանի նմոյշ

Ահա այսպէս, ծածկանուններու ներկայ բառարանի տպագրութեան յանձնելու որոշումը կայացնելէ ետք, առաջին առիթով որոշուեցաւ ճշդել մօտաւոր ժամանակաշրջանը, որ պիտի սկսէր Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադրութենէն՝ 19-րդ դարու վերջին տասնամեակէն մինչեւ 1930-ական թուականները, շուրջ 40-50 տարուան ժամանակամիջոցի մեր ազատամարտի կուսակցական-յեղափոխական գործիչները։ Բացի դաշնակցական դէմքերէն (կուսակցական գործիչներ, յեղափոխական մարտիկներ, հրապարակագիրներ), որոնք հիմնական մասը կը կազմեն անշուշտ, նկատի առնուեցան նաեւ Հնչակեան եւ այլ կուսակցութեանց պատկանող որոշ թիւով դէմքեր, այն սահմաններուն մէջ, որ անոնք առընչուած են Դաշնակցութեան գործունեութեան։

Ծածկանուններու գործածութիւնը, ինչպէս ըսուեցաւ, բռնատիրական վարչակարգերու տակ դարձած էր սովորական, յատկապէս յեղափոխական գործիչներու եւ մարտիկներու համար։ Փաստօրէն, ամէն կուսակցական ունէր իր ծածկանունը կամ ծածկանունները։ Յակառակ ընդհանրական դարձած այս երեւոյթին, կայ նաեւ այն պարագան որ շարք մը անուանի մարտիկներ կամ ֆետայիններ (օրինակ Սպաղանաց Գալէ) չունին ծածկանուն։ առ հասարակ անոնք կը յիշատակուին իրենց բնակավայր գիւղի անունով (Շէնիկցի, Տալուորիկցի, Սեմալցի)։ պատճառը այն էր որ ազգանուններու գործածութիւնը, մանաւանդ Արեւմտեան Յայաստանի գաւառներուն մէջ, այնքան ալ տարածուած չէր (Օսմանեան կայսրութեան կեղրոնական քաղաքներուն մէջ 19-րդ դարու վերջերէն է որ կ'ընդհանրանայ ազգանուններու գործածութիւնը)։ Յետեւաբար շատ մը դէմքեր, ինչպէս եւ անուան սկզբնատառերով յիշատակուածները նկատի չեն առնուած ներկայ բառարանինմէց։

Կը ծագի պարագան նաեւ այն ծածկանուններուն, որոնք այնքան ընդհանրացածեն, որ կարծէք փոխարինած են Ենթականներուն բուն անունները. օրինակ՝ այսօր քիչեր կը յիշեն որ Արամ Մանուկեանի իսկական անունը Սարգիս Յովհաննիսեան է, կամ Սիմոն Վրացեանինը՝ Գռուզեան կամ Գրուզինեան, Կարօ Սասունիինը՝ Կարապետ Ղազարեան, Արշակ Վռամեանինը՝ Օննիկ Ղերձակեան, Ռուբէն Դարբինեանինը՝ Արտաշէս Չիլինգարեան եւ այլն, եւ նման բազմաթիւ անուններ, որոնց դիմաց աստղանիշով ճշդած ենք, թէ Ենթականները առաւել ծանօթ են այդ ծածկանունով։

Բառարանի երկրորդ բաժինը յատկացուած է տեղանուն-ծածկանուններուն, որոնք իրենց թուաքանակով չեն զիջիր անձնանուն-տեղանուններուն եւ որոնց մասին կը խօսուի համապատասխան բաժնի մուտքին։

Այս աշխատասիրութիւնը Ենթարկուած է մէկէ աւելի Վերանայումներու եւ Վերստուգումներու։ Այդ աշխատանքին սատարած են առաջին առիթով ընկերներ Գէորգ Խուլինեան («Վեմ» համահայկական հանդէսի

խնբագիր), Աղասի Ազիզեան եւ Սեւակ Արոյեան, ինչպէս նաև պատմաբաններ Գեղամ Բաղալեան, Յովիկ Գրիգորեան եւ Աշոտ Սիմոնեան, որոնց բոլորին յատուկ շնորհակալութիւն:

Մասնաւոր յիշատակութեան արժանի է տիկին Թամար Սնապեան-Սուլըճեան, որուն բժախնդիր եւ մանրակրկիտ աշխատանքին կը պարտինք ներկայ բառարանին վերջնական ձեւաւորումը:

Ե. ՓԱՄՊՈՒՔԵԱՆ